Պարույր Սևակ

Ահա նորից գիշեր

Ահա նորից գիշեր, ահա նորից մշուշ,
Նորից տապից այրված փողոցն է երջանիկ,
Նորից մանրահատիկ անձրևն է մեղմ խշշում,
Եվ լուռ անրջում է ամեն կիզված տանիք...
...Ես մեղմ էի այնպես, խոնա՛րհ և ընտանի՛,
Այդ երեկ էր կարծես, դու հիշո՞ւմ ես արդյոք
Մեզ սպասում էր դեռ չեղած մի ընտանիք,
Մի համբախոս խրճիթ՝ ծածկված հող ու հարդով:
Բա՛խտ կար քո աչքերում, բախտ կար ամե՛ն ինչում,
Միայն սե՛ր կար կյանքում, ցավ ու ձանձրույթ չկար,
Ամեն խոսք ու հայացք խոստումով էր շնչում,
Երազով էր հարուստ օրն ու գիշերն երկար:
Բայց մեր բախտը այդ ո՞ր, ո՞ր գիշերում մռայլ,
Ո՞ր անձրևի ներքո և ո՞ւմ ձեռքը թաղեց,
Ո՞ր ջրհորդանն արդյոք քրքջաց մեզ վրա,
Այդ ո՞ր առուն խնդաց, լամպը քմծիծաղեց:
Այդ ո՞վ իմ գալիքը՝ քո աչքերի խորքում
Եվ քո սերը մորթեց իմ ձեռքերի վրա:
Այդ ո՞վ և ինչո՞ւ էր բաց դուռն իմ դեմ փակում
Ու զոչման աղ ցանում իմ վերքերի վրա:
Ո՞վ էր,- չե՛մ հասկանում, ես չգիտե՛մ, մշո՛ւշ,

Գիշե՛ր, հանկարծ քեզ պես ողջը մուժով պատվեց...
Միայն գիտեմ՝ փլվեց մի որբ տանիք դրսում
Եվ մայթերին, իմ տեղ, անձրևն ուշաթափվեց...

12.X.1943թ. 20.II.1952թ
Երևան